

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

ՍՈՒԲԵՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ԿԱՐՈ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՍԹԱՆՊՈՒԼԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ»

ԳԻՐԶ-ԱԼՄԱՆԱՆԸ

Ամբիփյասի կաթողիկոսութեան հարուստ գրացուցակը վկայում է, որ այն տասննակ տարիներ հայագիտական ռաւմնասիրութիւնների արտաշահմանեան խոշորագոյն եւ առաջատար կենտրոններից է: Այստեղ հրատարակում են ոչ միայն հոգեւոր, ռաւմնական, արաւեստագիտական եւ ընկերային-պատմական հետաքրքրութիւն ներկայացնող գրքեր, այլ նաեւ արեւմտահայ դասական եւ ժամանակակից գեղարաւեստական գրականութեան լայն ընտրամի, այդ թաւմ նաեւ՝ յայտնի մատենաշարեր, ընտրութեան բովո՞ւ ամցած, մրցանակներ շահած գրքեր: Գրքի պաշտամաւմը, քիչ է աեւ, գալիս է հմից, այն, ինչպէս դիպուկ նկատել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.-ը, խորհրդանշում է «վաւերականօրէն հայ ըլլալու մնայուն տագնապ» է, մարդկային եւ ազգային արժէքների հասնելու յարատեւ ձգտումի ու պայքարի գլխաւոր միջոց:

Ազգային գրականութեան մայր ուղղութիւններից՝ արեւմտահայ գարգացումները ժամանակակից գրականութեան մեջ կորցրել են աւուների վճիտութիւնը, եւ լեզուաիմաստային օտարածին տարրերը յաճախ գերիշխում են մեր Սփիւռքի տարրեր օջախներում: Այս առումով ստամբուլահայ գրականութեան դիմագիծը ճշդելու գիտական փորձերը Սփիւռքում եւ Հայաստանում հետապնդում են նաեւ գործնական նպատակ՝ բացայայտելու նորագոյն գրականութեան իրերի եւ իմաստների յարաբերութիւնը, առնուազն վերջին յիսում տարիների գրական վերասլաց շարժումը, միասնական բարձր յատկանիշների համակարգը, որոնց շնորհիւ այն մնում է առաջատար՝ միւս գրչօջախների համեմատութեան լոյսի տակ:

Բանասիրական՝ կենսագրական եւ մատենագիտական լայն պրպատումների եւ գիտական բարեխիղճ համադրումի արդիւնը է լիբանանահայ բանասէր Կարօ Աբրահամեանի վերջին՝ «Ժամանակակից իսթանպուլահայ գրողներ» աշխատասիրութեան առաջին հատորը, որը լոյս է տեսել «Գէորգ Մելիտիմեցի» գրական շարունակական մրցանակին տիրամալու ճանապարհով Ամբիփյասում 2004-ին: Նշենք, որ այս մատենաշարով են լոյս տեսել գեղարաւեստական եւ գրականագիտական վեց տասնեակը գլած արժեքաւոր երկեր, որոնցից յիշատակենք Հիլա Գալֆայեանի «Պոլսահայ նոր բանաստեղծութիւնը» (1998), Յակոբ Օշականի «Ծակ-Պոտուկ»ը (1996), Կոստան Ջարեանի «Անցորդը եւ իր ճամբան» (1974), «Բանկօօպը եւ մամութի ոսկորները» (1987), «Նաւը լերան վրայ» (2002), Վարդան Մատթէոսեանի «Կոստան Ջարեանի շուրջ» (1998), Նիկողոս Մարաֆեանի «Չափածոյ երկեր» (1982), Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Պըլտեանի, Աբրահամ Ալիբեանի, Անդրանիկ Ձէթունեանի եւ այլ հեղինակների ժողովածուներն ու մենագրութիւններն:

Խորայատուկ է Կ. Աբրահամեանի հաւաքածոյ գրքի կազմութիւնը, որը համամասն աշխատանքային տարբերութիւններէն բաղկացած է առաջին հերթին հեղինակի «տեսողութեամբ»: Կարելի է նկատել բանասէրի լուրջ յաւակնութիւնը՝ ներկայացնելու պոլսահայ գրական կյանքի բնութագրիչ խճանկարը՝ ժամանակի խորքային չափումներում: Այն շարունակում է դեռ անցեալ դարակէսին Պոլսում հրատարակուած «Համայնապատկեր հանրապետական շրջանի իսթան-պոլսահայ գրականութեան» ծաղկաբաղի կառոյցի սկզբունքները, որի մէջ, սակայն, կենսագրական-տեղեկատուական նիւթերը խիստ մակերեսային են եւ չունեն մեկնական-ճանաչողական այն մանրակրկիտ յանձնառութիւնը, որը հսկելիօրէն առանձնացնում է ատելի բան կէս դար անց հրապարակ իջնող այս, յիշատի, նոր «համայնապատկերը», արտայայտութիւն, որ համեմատական կարգով պատշաճում է այս աշխատասիրութեանը:

Դա վերաբերում է նաեւ գրական նոր բովանդակութեան. չէ՞ որ այս տասնամեակներին գորացաւ գրականութիւնը Բոսֆորի ափերին, ուրուագծուեցին առարկայական խորհրդապաշտութեան շարժման յատկանիշները, հրապարակ իջան Սփիւռքի լուսագոյն գրական ջոկատի հիմնադրէր ստեղծագործութիւնները: Կարելի է ասել, որ շարժումն աւարտում, ամբողջական նկարագիր ունի այսօր, երբ գրական ճանապարհի հիմնական կետմանները մնացել են ետեւում, ճշդուել են գրական ուժերի յարաբերակցութիւնը ինչպէս տեղական, այնպէս էլ համահայկական միջօրէականներում:

Կարօ Աբրահամեանի բանասիրական մանրակրկիտ աշխատանքը երեւան է բերում հենց այդ ճշդումների անմիջական արդիւնները. այն որոշակիօրէն յիշատի բացայայտում է պոլսահայ գրականութեան հանրագիտակ եւ գունեղ, հարուստ ենթախորով շերտերը: Ժամանակի ընթացքում գրական միտքը տարբեր լուսարձակների տակ փորձել է վերհանել աւանդոյթներով գորացած նորագոյն գրականութեան հիմնատարները, ընդ որում՝ տարբեր միջավայրերի գրական փորձառութեան ներառումով:

Պոլսահայ գրական նորագոյն դպրոցը Կ. Աբրահամեանի կազմած առաջին գրքում ներկայացուած է ութ բաժիններով: Արձակ, չափածոյ եւ թատերական երկերի բնութագրական ընտրութիւններն ու գնահատութիւնները, գրական-տեսական վերլուծումները կազմում են ծաղկաբաղի հիմնարար հատուածները: Տեղում եւ աւելացնենք, որ երկրորդ հատորի համար նախատեսուած են հրապարակագրութիւնը, յուշագրութիւնը, մանկական եւ պատանեկան գրականութիւնը, թարգմանական եւ բանասիրական բնագաւառները: Առանձին ենթաբաժիններ կը կազմեն թրքագիր հեղինակները, նաեւ նրանք, որոնք հայերէնից կատարած թարգմանութիւններով թուրք ընթերցողներին ներկայացնում են իայ գեղարուեստական, պատմական եւ յուշագրական ոլորտները, որոնք յաւելուածական ուղղութիւն ունին:

Առաջին հատորի կառուցուածքը ենթադրում է, նախ, ստամբուլահայ գրական տեսութիւնների ընդհանրական բնութիւն: Դա ճիշդ մօտեցում է: Տեսարանական հարցադրումների համար Կ. Աբրահամեանն ընտրել է երեք ուղղութեան «հայ-նացիներ»: Առաջինը «տեղացիներն» են: Մաքրուիի Յակոբեանից ընտրուած

հատուածն անդրադարձ է «Մարմարա»ի գրական էջերին, որոնք անցնալ դարի 50-ական թթ., ըստ էութեան, ձեւաւորեցին գրական շարժում՝ դիմագիծ հաղորդելով նրան:

Ուշագրաւ է Արթօ Ծիմպիւշեանի՝ ականաւոր բանաստեղծ Ջարեհ Խրախումու մօտեցումը, որը համակարգում է նշուած գրական շարժումը առարկայական խորհրդանշապաշտութեան ուղղութեան յատկանիշներով: Նա ազգային քերթութեան «մայր գիծ» է փնտռել դեռ յիսումականների վերջից առարկաների ու իրերի խորհրդանիշները պատկերային համակարգում խաղարկելով որպէս մտածողութեան իմացական խտութիւն: Եւ այն ժամանակ, երբ Հայաստանից շատերը իր, Ջահրատի երգերում, արձակի նոր արժէքներում «չէին տեսնում» ազգային ուղղութիւն, ինքն էր, որ կարողում էր «հոգեհանգիստ», բարձրանում էր «գեռն ի վեր», բերգատեան իմաստասիրութեան մէջ ազատութեան եւ կամքի սկզբունքներով պատաստում էր պոլսահայ ազգային ենթահողը:

Լեւոն Շառոյեանի (Հալէպ) «Գրական վարուցան Վոսփորի ափին» ուսումնասիրութիւնը շեշտադրում է Պոլսոյ նորօրեայ դերը՝ հինն համարժէք, որպէս շարունակական հմայք «բոլոր անոնց համար, որոնք զայն ճանչցան կամ գտան իրելւ անփոխարինելի ոստան Հայ մտքի եւ կեդրոն իմացական յեղափոխիչ շարժումներու»: Նա հաւատում է, որ համայնքի վաղուայ օրը «խոստամալից նորերն» են, որոնք պիտի վառ պահել ձգտեն մայր գրչօջախի աւանդոյթները: Այնուհանդերձ մնան հաւատի «գործակիցները» թող են:

Արփի Թորոյեանի (Փարիզ) համար մէկ տասնամեակ առաջ գրուած յօդուածում խիստ կարեւոր է ընդգծել, որ պոլսահայ գրականութիւնը ապրում է անցումի իրովի շրջան. նա էլ էլ տեսնում սերնդի հօգը դիմագիծը, սակայն ցանկանում է որսալ «անցումային» պահը՝ բանաստեղծական անցում աւանդոյթ պահող սերնդից (տեւակը կազմում են Ջահրատը, Ջ. Խրախումուն, Ռ. Հատտէճեանը) դէպի նորերը՝ Բ. Էսդրեան, Ճամկէօզ Վարուժան, Ջիֆիօլլու Վերճիան, յատկապէս Լիւսան Պըշաքճը, վերջինս, սակայն, թարգմանաբար:

Միւս բաժինները Կ. Աբրահամեանի հաւաքածոյի մէջ աւելի «մասնագիտացուած են»: Այսպէս, բանաստեղծներին «քննում» եւ գնահատական է տալիս Պէպօ Սիմոնեանը (Պէրլոթ), արձակագիրներին՝ Ռուպէր Հատտէճեանը (Ստամբուլ), թատերագիրներին՝ Վարուժան Աճէմեանը: Վերջին բաժնի մէջ ներառուած են նաեւ Ջաւէն Պիպէռեանի, Սուրէն Դանիէլեանի եւ Յովհաննէս Փիլիկեանի մասնակի տեսակէտները Ռ. Հատտէճեանի, Վ. Աճէմեանի եւ Ա. Վարդանեանի ստեղծագործական շերտերի մասին: Այս երեք բաժիններին գիտական բժախնդրութեամբ Կ. Աբրահամեանը կցել է կենսագրական եւ մատենագիտական տուեալներ՝ հիսնելով սպառիչ եւ վերաբերմունքի տեսակէտից «չէզոք» գնահատութիւնների, ինչն այս աշխատատար գրքի շահեկան յատկանիշներից է:

Հեղինակների ու նրանց ստեղծագործութիւնների գնահատումն ու արժեւորումը թողնելով բանասէր գրականագէտներին՝ Կարօ Աբրահամեանը ընթերցողներին է ներկայացնում պոլսահայ գրական մշակների ստեղծագործութիւնները, ընդ որում՝ նրանց անունները դասակարգելով այբբենական

հերթականութեամբ: Ներկայացուած են հրատարակուած ծրագրային ստեղծագործութիւնները, ինչպէս նաեւ մամուլի Լճերից քաղուած գրական նշանակալի նմոշները, ինչն աւելի արժեքատու է դարձնում սոյն աշխատութիւնը:

Գրքում պոլսահայ դպրոցի նշանաւոր ներկայացուցիչներն են՝ Յակոբ Մնձորիւն, Բագարատ Թեւեանը, Արեգ Տիրազանը, Վարդան Կոմիկեանը, Սյրտիշ Հաճնանը, Վարուժան Աճեմեանը, Արքիմէ Տատրեանը, Կարալիս Դանճիկեանը, Զաւէն Պիպէռեանը, Երուանդ Կոպէլեանը, Զահրատը, Զարեհ Խրախունին, Վարդ Շիկահերը, Ռոպէր Հատտեճեանը, Անդան Էօզէրը, Արման Վարդանեանը, Օննիկ Ֆըշքեանը, Սյրտիշ Մարկոսեանը, Իգնա Սարքապալանը եւ ուրիշներ: Իրանը համամասնութեան սկզբունքով են ներկայացուած՝ ըստ գրական վաստակի, տաղանդի, համայնքում ձեռք բերած կշռի ու ճանաչողութեան:

Ասել է թէ՛ գրքում պոլսահայ ժամանակակից գրականութեան խալտանկարն է՝ իր լաւագոյն կտրուածքով, թրթիռով, լոյսով ու ստուերով, գոյնով ու խտութեամբ:

Լաւագոյնը՝ Սփիտքի գուգահեռների վրայ, լաւագոյնը՝ բնօրրանի պաշտպանութեամբ: Եւ ինչպէս գրականագէտ Լեւոն Շառոյեանն է անակնկալ վրայ բերում՝ «Ճախանձի գրգիռ» Սփիտքի մեր՝ միւս գաղութներուն: Ամենայն դրական իմաստով: Եւ անշուշտ, փոքրիկ, բայց ոչ աննշան ձեւակերպումով՝ մայր ենթահողի վրայ ձեւուած գրական աւազանով, որ երբեք գաղութի «տարազ չունի», այլ ծննդավայրի ու գրական հայրենիքի հօգը ձգողութիւն:

Գրքում, ի հարկէ, կան թերացումներ: Նման կառոյցի աշխատանքներում հնարատու չի լինում խուսափել կրկնութիւններից, որից անմասն չէ Կարօ Աբրահամեանի աշխատասիրութիւնը: Դա նրեւում է տարբեր հեղինակների խօսքերում՝ մտքերի ու փաստերի շարադրման ժամանակ, վերաշարադրումներն առկայ են, իսկ կազմողը «ձեռք չի բարձրացնում» ուրիշի բնագրային իրատուքի վրայ: Նիւթը գրուել է տարիներ առաջ, իսկ գնահատութեան ժամանակը պահանջում է նոր մօտեցումներ, նոր փաստեր: Յաճախ լուսանցքում լրացման կարգով տեղ են գտնում վաղուց ակնյայտ տեղեկատուութիւն, որը «եփն» միթի խմբագրման հետեւանքն է: Աէկ այլ թերացում հապճեպութեան կնիքն ունի. Այսպէս, մեր ծաւալում մեծագրութեան խորագիրը Զարեհ Խրախունու ստեղծագործութեան մասին «վերախմբագրուած է»։ «Բանաստեղծութեան ազատագրումը» չգիտես ինչու դարձել է «Բանաստեղծութեան ազատերգում»:

Բերուած դիտողութիւնները որակ չեն կազմում եւ ստուեր չեն ձգում պոլսահայ ժամանակակից գրականութեան նոր համայնապատկերի վրայ: